ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Ս. Ե. ՖՐԱՆԳՈՒԼՅԱՆ, Կ. Մարքսի փիլիսոփայական և սոցիալ-քաղաքական հայացքների ձևավորման պատմությունից, *«Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1983, 320 էջ։*

Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի հայացքների ձևավորման պատմությունը բարդ է ու ելևէջներով հարուստ։ Այդ հարցի քննությանն էլ նվիրված է գրախոսվող աշխատությունը։ Հեղինակը ելակետ է ունեցել այն հանգամանքը, որ մարքսիզմի հիմնադիրների հայացքների ձևավորման պրոցեսի առանձին հարցերի սպառիչ պատասխանը հաճախ դժվար է գտնել բացառապես նրանց վաղ շրջանի աշխատություններում։ Դա բացատրվում է ոչ միայն փաստերի սակավության, այլև նրանց առանձին դատողությունների ձևավորման պրոցեսում գտնվելու հանգամանքով, դրանց դեռևս ոչ հստակ լինելու, հաճախ նաև երկակի իմաստ արտահայտելու կամ առնվազն նման առիթ ընձեռելու իրողությամբ։ Ս. Ֆրանգուլյանն իրավացի է, երբ պնդում է, որ նոր ուսմունքի ձևավորումը, թեև ոչ բոլոր մանրամասներում, տեղի է ունեցել պրոբլեմների կոմպլեքս լուծմամբ։ Դեռ ավելին, ոչ միայն առանց այդ աշխարհայացքի, այլև հարակից մյուս հարցերի փոխադարձ կապի ու պայմանավորվածության, դրանց զարգացման ընդհանուր տենդենցի բացահայտման անհնար է վեր հանել խնդրո առարկա հարցերի զարգացման ընթացքը, առանձնահատկությունները։ Ի պատիվ հեղինակի, պետք է նշել, որ նա ոչ միայն հաշվի է առել պրոբլեմի հետազոտության այս առանձնահատկությունը և դժվարությունները, այլև հաջողությամբ լուծել է դրանք։

Ուղեցույց ունենալով գիտահետազոտական աշխատանքի մարքս-լենինյան մեթոդաբանության սկզբունքները, ինչպես նաև օգտվելով հետազոտման պատմական և տրամաբանական մեթոդների ընձեռած հնարավորություններից՝ Ս. Ֆրանգուլյանը ստեղծել է մի ինքնատիպ համախարգ։ Նա նախ՝ երիտասարդ Կ. Մարքսի հայացքների ձևավորման էվոլյուցիան քննում է հասուն մարքսիզմի լույսի տակ, ապա այն զուգակցում Ֆ. Էնգելսի հայացքների ձևավորման պատմությանը՝ առաջնորդվելով Վ. Ի. Լենինի այն ցուցումով, ըստ որի «Մարքսի հայացքների ճիշտ գնահատման համար անպայման անհրաժեշտ է ծանոթ լինել նրա մերձավորագույն համախոհ և աշխատակից Ֆրիդրիխ Էնգելսի *երկերին։ Չի կարելի այն անմիջականորեն շարադրել՝ հաշվի չառնելով* Էնգելսի բոլոր *երկերը»*[1]*։ Հեղինակը ընդգծում է, որ այդ դժվարին աշխատանքն անհնար է իրականացնել նաև առանց Վ. Ի. Լենինի գաղափարական ժառանգության խոր իմացության և մեթոդաբանական ցուցումների յուրացման։*

Ս. Ֆրանգուլյանը հիմնավոր քննել է տակավին տարակարծության առարկա հարցեր, գիտական շրջանառության մեջ դրել նոր կամ պատշաճ ուշադրության չարժանացած փաստեր։ Հետազոտվող հարցերի գիտական խոր վերլուծության և դրանցում նոր երանգներ բացահայտելու միջոցով նա ոչ միայն նորովի է գնահատել առանձին հեղինակների ոչ քիչ թվով հետևությունները, այլև առաջ է քաշել նոր լուծումներ և վարկածներ։ Գիտական համարձակ ու հիմնավոր բանավեճը, Կ. Մարքսի հայացքների ձևավորման ամբողջական շղթայի այս կամ այն օղակի արժեքավորումն ու վերարժեքավորումը, գիտական կանխատեսումները մեծ չափով բարձրացնում են մենագրության գիտական արժեքը։

Մենագրությունը բաղկացած է չորս գլուխներից։ Առաջին գլուխը («Որոնումների ճանապարհին») նվիրված է Կ. Մարքսի գիմնազիայի ավարտական դասարանի շարադրություններում, համալսարանում սովորելու առաջին տարիներին գրած բանաստեղծություններում և 1837 թ. նոյեմբերի 10-ին հորը գրած խիստ արժեքավոր նամակում զարգացրած մտքերի, դատողությունների վերլուծությանը։ Հետազոտելով այդ նյութերը՝ հեղինակը նորովի է գնահատել դրանք՝ գալով այն հետևության, որ հիշյալ ժամանակաշրջանում երիտասարդ Կ. Մարքսն արդեն հակված է կառավարման միապետական սիստեմն անընդունելի դիտելու կողմը։ Նրա հայացքներում նկատելի են ժողովրդական մասսաներին ծառայելու ձգտումը, հումանիզմը։ Ս. Ֆրանգուլյանն ի

---

1 *Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 26, էջ 109։*

տարբերություն մյուս հեղինակների նկատել է նաև, որ հորը հասցեագրած վերոհիշյալ նամակում սպմենային ձևով դրսևորվել են Ֆիխտեի, Կանտի և Հեգելի փիլիսոփայական սիստեմների առանձին կողմերի նկատմամբ Կ. Մարքսի քննադատական մոտեցման առաջին քայլերը։ Հեղինակը միաժամանակ բացահայտել է Կ. Մարքսի՝ նման կողմնորոշման ակունքները և կրած տարատեսակ ազդեցությունները։ Առանձնապես ուշադրության է արժանի Կ. Մարքսի գրական ստեղծագործությունների հասարակական-քաղաքական միտումների արժեքավորումը։ Հեղինակը հանգամանորեն ուսումնասիրելով այդ նյութերը՝ նորովի է գնահատում դրանք, անում հետաքրքրության արժանի հետևություններ։ Փաստացի հարուստ նյութերով առաջին անգամ ընթերցողի ուշադրությանն է ներկայացվում երիտասարդ Կ. Մարքսի աթեիստական հայացքների ձևավորումը։ Ցույց է տրվում, որ արդեն հիշյալ ստեղծագործություններում սպմենային զարգացում է ապրում բնության նկատմամբ Կ. Մարքսի դրսևորած դիալեկտիկական և մատերիալիստական մոտեցումը։ Ուշադրության է արժանի նաև հեղինակի այն հետևությունը, որ այդ ստեղծագործությունների մեծ մասում ակնհայտ է նաև միապետական սիստեմի նկատմամբ դրսևորած Կ. Մարքսի հեղափոխական-դեմոկրատիզմի դիրքերից բխող քննադատությունը, միապետական սիստեմի նկատմամբ պրուսական բուրժուազիայի երկդիմի, վախկոտ, անհետևողական բաղաքականության մերկացումը։ Վերոհիշյալ հարցերի շուրջը Կ. Մարքսի հայացքների ձևավորումը տրամաբանական հետևողականությամբ նրան հանգեցնում է երիտհեգելական առաջադիմական շարժմանը, որի ուսումնասիրությանն էլ նվիրված է մենագրության երկրորդ գլուխը («Կ. Մարքսը, Ֆ. Էնգելսը և երիտհեգելականությունը։ Էական բացթողում երիտհեգելականների հայացքների արժեքավորման մեջ»)։ Բավական ինքնատիպ և արժեքավոր է հասարակական-քաղաքական տեսանկյունից երիտհեգելական շարժման ու նրանում Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի գրաված ուրույն դիրքորոշման վերաբերյալ հեղինակի կատարած հետազոտությունը։

Աշխատության մեջ բացահայտված են այդ շարժման նոր կողմեր։ Առանձնապես ուշադրության են արժանացված երիտհեգելականների արմատական թևի առավել հետևողական մասի, առաջին հերթին Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի հայացքներում դրսևորված հակումը դեպի «անգլո-ֆրանսիական մատերիալիզմը»։ Այս իրողությունը զարմանալիորեն դուրս է մնացել հետազոտողների տեսադաշտից։ Մինչդեռ մարքսիզմի հիմնադիրների կողմից պատմության մատերիալիստական ըմբռնմանը և կոմունիզմին անցնելու գաղափարական էվոլյուցիայի բարդ շրջայում այդ էական նշանակություն ունեցող քայլի անտեսումը մեզ հեռացնում է ճշմարտությանը հասնելու ռեալ ուղիներից։ Նման հարցադրմամբ հեղինակը դիալեկտիկական մոտեցում է դրսևորել Կ. Մարքսի հայացքների ձևավորման տվյալ աստիճանը արժեքավորելու և հետագա զարգացման հավանական տենդենցների միջև տրամաբանական կապ ու պայմանավորվածություն տեսնելու հարցում։

Կ. Մարքսի հայացքների ձևավորման պատմության որակական անցումների բարդ պրոցեսում կարևոր նշանակություն ունի նրա դոկտորական դիսերտացիան («Դեմոկրիտի փիլիսոփայության և էպիկուրի ինֆիլիսոֆիայության տարբերությունները»), որի համակողմանի վերլուծությանն է նվիրված աշխատության երրորդ գլուխը («Կ. Մարքսի հասարակական-քաղաքական հայացքների զարգացումը դոկտորական դիսերտացիայում»)։ Հիշյալ աշխատության վերաբերյալ տակավին բացակայում են հատուկ ուսումնասիրությունները։ Ընդհանուր բնույթ կրող առանձին հետազոտություններում հեղինակները այդ աշխատությանն անդրադարձել են թռուցիկ կերպով, երբեմն էլ արժեքավորել միակողմանիորեն՝ նրանում տեսնելով միայն հեղինակի տուրքը հեգելյան փիլիսոփայության նկատմամբ։ Գրախոսվող աշխատության մեջ Ս. Ֆրանգուլյանը Կ. Մարքսի դիսերտացիան դարձրել է հատուկ ուսումնասիրության առարկա։ Նա բավականին ինքնատիպ է գնահատել Կ. Մարքսի հայացքների ձևավորման առանձին կողմեր՝ հանգելով խիստ ուշագրավ հետևությունների։ Ուշադրության է արժանի նրա այն հետևությունը, որ Կ. Մարքսը XVII—XVIII դդ. անգլո-ֆրանսիական մատերիալիզմի դիրքերից լրջորեն քննադատել է նաև Հեգելի փիլիսոփայության առանձին կողմերը։ Հատկապես ընդգծված է Դեմոկրիտի և էպիկուրի մատերիալիստական հայացքների պաշտպանությունը Կ. Մարքսի կողմից։ Ուշագրավ է նաև արված այն հետևությունը, որ Կ. Մարքսի կողմից դիսերտացիայում ինքնագիտակցության փիլիսոփայական յուրօրինակ ըմբռնումը, ի հակադրություն Հեգելի, դիտվում է մի կողմից բնության երևույթների արժեքավորումը կրոնական բացատրության շրջանակներից հանելու, մյուս կողմից, դրանով իսկ, այն ճանաչողության պրոցեսի կարևոր աստիճաններից մեկը դարձնելու միտում։

Հարցերի արժեքավորման ինքնուրույնությունը, նոր փաստերի օգտագործումը այլ հեղինակների կողմից արդեն որոշակի մեկնաբանում ստացած Կ. Մարքսի առանձին դատողությունների նկատմամբ դրսևորած նոր մոտեցումն ու նորովի արժեքավորումն ակնհայտ են նաև աշխատության չորրորդ գլխում («Անցումը պատմության մատերիալիստական ըմբռնման և կոմունիզմին»)։ Ուսումնասիրողների շրջանում պատմության մատերիալիստական ըմբռնմանն ու կոմունիզմին անցնելու ժամանակագրական սահմանները ճշգրտելու հարցում տակավին քիչ չեն տարակարծությունները։ Գրախոսվող աշխատության հեղինակը, ի տարբերություն այլ հետազոտողների, այդ անցման ուղղությամբ Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի կատարած նախնական քայլերը վերագրում է 1842 թ. երկրորդ կեսին։ Այդ պնդումը նա հիմնավորում է ոչ միայն այդ շրջանում նրանց գրած աշխատությունների, այլև 1842 թ. Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի՝ այլ անձանց գրած նամակներում արված և մինչ այժմ պատշաճ ուշադրության չարժանացած արժեքավոր դատողությունների վերլուծությամբ։ Այս առիթով Ս. Ցրանգուլյանը գիտական շրջանառության մեջ է դրել նաև այլ փաստեր, որոնք առնված են Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի հասուն շրջանում գրած աշխատություններից։ Մեծ չափով օգտագործված է նաև լենինյան ժառանգությունը։ Մասնավորապես ուշադրության է արժանացած Վ. Ի. Լենինի «Հոդվածների պլանի ուրվագիծ Մարքսի մահվան 30-ամյակի առթիվ» նորահայտ ձեռագիրը, որը գիտական շրջանառության մեջ է դրվում առաջին անգամ։ Հիշյալ ձեռագիրը մեծ չափով նպաստում է տարակարծությունների առարկա դարձած տվյալ հարցում պարզություն մտցնելուն։

Աշխատության արժեքը չի սահմանափակվում միայն գիտական շոշափելի արդյունքներ հասնելու իրողությամբ։ Հեղինակը գիտական արդյունքները մեծ չափով ծառայեցրել է նաև իբրև լուրջ կռվան՝ հակակոմունիզմի դեմ տարվող գաղափարաքաղաքական անզիջում պայքարում։ Այդ առումով քննվող մենագրությունը հարուստ նյութ է տալիս նաև պրոպագանդիստական և ագիտացիոն-մասսայական աշխատանքի համար։

Գիրքն ավելի անթերի տեսնելու միտումով կցանկանայինք հայտնել մի քանի նկատառումներ։ Մեզ թվում է, որ փոքր-ինչ ծավալուն է Կ. Մարքսի գիմնազիայի ավարտական դասարանի շարադրություններին վերաբերող հատվածը և այդ ուղղությամբ տարվող բանավեճը, որը որոշ չափով վերաբերում է նաև Կ. Մարքսի դիսերտացիայի վերլուծությանը։ Բացի այդ, մենագրության չորրորդ գլուխն ավելի ամբողջական տեսք կունենար, եթե այն չսահմանափակվեր մինչև 1843 թ. ընկած ժամանակահատվածով։ Դա, ինչ խոսք, աշխատության սահմանափակ ծավալի հետևանք է, որը կարելի էր հավասարակշռել վերը նշված հարցերի շարադրման ծավալը կրճատելու հաշվին։ Զգացվում է, որ հեղինակը մեծ վերելքով ու կրքոտությամբ է ձեռնամուխ եղել քննվող հետազոտությանը։ Դա արտահայտվում է նաև առանձին հեղինակների հետ ունեցած բանավեճում։ Ցանկալի է, որ այդ, թեև պատշաճի սահմաններում դրսևորվող, եռանդագին կրքոտությունը պահպանվեր, բայց փոքր-ինչ հանդարտ տարբերակով։ Նշենք նաև, որ աշխատության տողատակերում առանձին դեպքերում չի պահպանվել պահանջվող կետադրության միօրինակությունը։

Ամփոփենք, գրախոսվող աշխատությունը զգալի ավանդ է մարքսագիտության մեջ։

ՄՈՒՍԱՅԵԼ ՔՈՉԱՐՅԱՆ
Փիլիսոփայական գիտությունների դոկտոր
ՎՐՈՒՅՐ ՄԽԻԹԱՐՅԱՆ
Փիլիսոփայական գիտությունների թեկնածու